

**Հ Հ Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ձ Ի Լ Ե Ռ Ն Ա Կ Ե Ր Տ Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք ՈՒ Մ Ի Ր Ա Կ Ա Ն Ա Ց Վ Ա Ս Վ Ա Ր Ձ Ա Կ Ա Ն
Հ Ս Կ Ո Ղ ՈՒ Թ Յ Ա Ն Ա Ր Դ Յ ՈՒ Ն Ք Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Բ Ե Ր Յ Ա Լ**

28.08. 2013թ.

գ. Լեռնակերտ

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի օգոստոսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լեռնակերտի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 89 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանի /խմբի ղեկավար/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի /խմբի անդամ/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի /խմբի անդամ/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի առաջատար մասնագետ Նաիրա Մարտիրոսյանի /խմբի անդամ/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Արմեն Հարությունյանի /խմբի անդամ/, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչության/ առաջին կարգի մասնագետ Օֆելյա Մխիթարյանի /խմբի անդամ/, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Լեռնակերտի գյուղական համայնքի ղեկավար Մովսես Մովսիսյանի, Լեռնակերտի համայնքում իրականացրել է վարչական հսկողություն՝ 2010 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2013 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակաշրջանի համար:

Վ Ա Ր Ձ Ա Կ Ա Ն Հ Ս Կ Ո Ղ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Վարչական հսկողությունը սկսվել է 2013 թվականի օգոստոսի 8-ին և ավարտվել՝ 2013 թվականի օգոստոսի 21-ին, արդյունքում պարզվել է հետևյալը՝

- 1) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ համայնքի նորընտիր ավագանին ընդունել է իր կանոնակարգը /2012 թվականի նոյեմբերի 27-ի որոշում թիվ 1, արձ. թիվ 8/:
- 2) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին հաստատել է համայնքի 2009-2012թթ.զարգացման ծրագիրը /2009 թվականի հունվարի 16-ի արձ. թիվ 1/:

Ծրագրով նախատեսված թվով 6 ծրագրային աշխատանքներից կատարվել է 3-ը, միջնակարգ դպրոցի հիմնանորոգման, մշակույթի տան գույքի համալրման և համայնքի գազաֆիկացման վերջնական շահագործման աշխատանքները չեն կատարվել:

Համայնքի ղեկավարի կողմից օրենքով սահմանված ժամկետում կազմվել է համայնքի 2013-2016թթ. զարգացման ծրագիրը և ներկայացվել է համայնքի ավագանու հաստատմանը /2012 թվականի նոյեմբերի 27-ի որոշում թիվ 4, արձ. թիվ 8/:

Համայնքի 2009-2012թթ. և 2013-2016թթ. զարգացման քառամյա ծրագրերում նշված չեն պահանջվող ֆինանսական միջոցները:

- 3) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին 21.12.2010թ. թիվ 1 /արձ. թիվ 14/, 09.12.2011թ. թիվ 24-Ն և 24.12.2012թ. թիվ 4/արձ. թիվ 11/ որոշումներով հաստատել է համայնքի 2011, 2012 և 2013 թվականների բյուջեները:

Համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 24-Ն որոշման մեջ բացակայում են համայնքի ավագանու անդամների ստորագրությունները: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի՝ ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները, որոնց դիմաց նրանք ստորագրում են:

Համայնքի ավագանին 24.01.2011թ. թիվ 1 /արձ. թիվ 1/, 26.01.2012թ. թիվ 1 /արձ. թիվ 1/ և 21.01.2013թ. թիվ 1-Ն /արձ. թիվ 1/ որոշումներով հաստատել է համայնքի 2010, 2011 և 2012 թվականների բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները: Որոշումներում՝ որոնք պարունակում են նորմատիվ բնույթի դրույթներ, հերթական համարներից հետո չեն նշվել «Ն» տառը /հիմք՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մաս, 38-րդ հոդվածի 3-րդ մաս/:

Առանձին որոշումներում բացակայում են համայնքի ավագանու անդամների ստորագրությունները /24.01.2011թ. թիվ 1 /արձ. թիվ 1/: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները, որոնց դիմաց նրանք ստորագրում են: Բացի այդ, ավագանու նիստերի արձանագրումն ապահովում է ոչ թե համայնքի ավագանին, այլ՝ աշխատակազմի քարտուղարը /հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ/:

Համայնքի ավագանու 06.10.2010թ. թիվ 21-Ն, 26.11.2010թ. թիվ 1/արձ. թիվ 12/, 09.12.2010թ. թիվ 1/արձ. թիվ 13/, 24.01.2011թ. թիվ 2/արձ. թիվ 1/, 21.03.2011թ. թիվ 1/արձ. թիվ 3/, 27.04.2011թ. թիվ 1/արձ. թիվ 4/, 25.07.2011թ. թիվ 2/արձ. թիվ 7/, 26.08.2011թ. թիվ 1/արձ. թիվ 8/, 06.10.2011թ. թիվ 1/արձ. թիվ 10/, 24.11.2011թ. թիվ 1/արձ. թիվ 11/, 19.12.2011թ. թիվ 1/արձ. թիվ 13/, 26.01.2012թ. թիվ 2/արձ. թիվ 1/, 08.05.2012թ. թիվ 1/արձ. թիվ 3/, 20.08.2012թ. թիվ 1/արձ. թիվ 5/, 26.09.2012թ. թիվ 1/արձ. թիվ 6/,

26.10.2012թ. թիվ 1/արձ. թիվ 7/, 27.11.2012թ. թիվ 3/արձ. թիվ 8/, 18.12.2012թ. թիվ 2/արձ. թիվ 10/, 21.01.2013թ. թիվ 2-Ն, 18.03.2013թ. թիվ 7-Ն, 13.04.2013թ. թիվ 10-Ն, 29.05.2013թ. թիվ 13-Ն և 02.08.2013թ. թիվ 1/արձ. թիվ 10/ որոշումներով համայնքի բյուջեներում կատարվել են փոփոխություններ:

Առանձին որոշումներ չեն համապատասխանում <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի և 43-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին, համաձայն որոնց՝ իրավական ակտում փոփոխություններ նախատեսող իրավական ակտի վերնագրում բերվում է փոփոխվող իրավական ակտի կրճատ անվանումը, իսկ իրավական ակտում փոփոխություն նախատեսող իրավական ակտում՝ տրվում է իրավական ակտի լրիվ անվանումը:

- 4) Համայնքի ավագանին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված կարգով համայնքի բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն չի իրականացրել:

Համայնքի ղեկավարը խախտելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ համայնքի բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյակային հաղորդումներ չի ներկայացրել համայնքի ավագանուն:

Վերոնշյալ ժամանակահատվածում համայնքը վարկեր չի ստացել:

- 5) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ համայնքի ավագանու 26.10.2010թ. թիվ 23-Ա, 21.12.2010թ. թիվ 7/արձ. թիվ 14/, 24.01.2011թ. թիվ 3/արձ. թիվ 1/, 21.03.2011թ. թիվ 4/արձ. թիվ 3/, 26.05.2011թ. թիվ 1/արձ. թիվ 5/, 26.09.2011թ. թիվ 1/արձ. թիվ 9/, 09.12.2011թ. թիվ 25-Ա, 26.01.2012թ. թիվ 3/արձ. թիվ 1/, 26.03.2012թ. թիվ 1/արձ. թիվ 2/, 26.07.2012թ. թիվ 2/արձ. թիվ 4/, 26.09.2012թ. թիվ 2/արձ. թիվ 6/, 27.11.2012թ. թիվ 2/արձ. թիվ 8/, 11.02.2013թ. թիվ 6-Ա, 25.03.2013թ. թիվ 8-Ա, 13.04.2013թ. թիվ 11-Ա, 29.05.2013թ. թիվ 14-Ա և 26.07.2013թ. թիվ 16-Ա որոշումներով դրամական օգնություններ են տրամադրվել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին:

- 6) Համայնքի ավագանու 2011 թվականի մարտի 21-ի թիվ 6 /արձ. թիվ 3/ որոշմամբ համայնքի սեփականություն համարվող 120.9հա հողատարածքը ուղղակի վաճառքով օտարվել է Հենրիկ Սիմոնյանին: Որոշման մեջ նշված չեն հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը և վաճառքի գինը:

Համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1 /արձ. թիվ 9/ որոշմամբ համայնքի սեփականություն հանդիսացող 0.02հա հողատարածքը 10 տարի ժամկետով, ամսական 40.000 դրամ վարձավճարով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է <<Օրանժ-Արմենիա>> ՓԲԸ-ին:

- 7) Համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ համայնքի ավագանու կողմից վերահսկողություն չի իրականացվել:

- 8) Համայնքի ղեկավարի օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումների դատական կարգով վիճարկումներ չեն եղել:
- 9) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ավագանին 21.12.2010թ. թիվ 4/արձ. թիվ 14/, 09.12.2011թ. թիվ 21-Ա և 24.12.2012թ. թիվ 2/արձ. թիվ 11/ որոշել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2011, 2012 և 2013 թվականների համար:
- 10) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին որոշում է կայացրել Լեռնակերտի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկը «Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին /21.03.2011թ. թիվ 3 /արձ. թիվ 3//:
- 11) Համայնքի ղեկավարի 2011 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 13 կարգադրությամբ Լուսիկ Ղազարյանը ազատվել է Լեռնակերտի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկի տնօրենի պաշտոնից:

Համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի ավագանին համաձայնություն է տվել Լուսիկ Ղազարյանին «Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակում կատարելու վերաբերյալ /համ.ղեկավարի կարգադրություն՝ 09.01.2012 թ. թիվ 2/:

- 12) Առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնների հաստատման վերաբերյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի դրույթը հանված է:
- 13) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին 21.12.2010թ. թիվ 2/արձ. թիվ 14/, 09.12.2011թ. թիվ 19-Ն և 24.12.2012թ. թիվ 1/արձ. թիվ 11/ որոշումներով սահմանել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր՝ 2011, 2012 և 2013 թվականների համար:

Համայնքի ավագանին չի սահմանել «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «դ» և «ե» կետերով սահմանված վճարների դրույքաչափեր: Պետք է սահմանվեր աղբահանության վճարի դրույքաչափեր՝ համաձայն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթների: Որոշմամբ հաստատված հավելվածի դրույթները ճիշտ չեն համարակալված: Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ, 6-րդ մասերի՝ իրավական ակտերում դրույթները շարադրվում են հերթական համար ունեցող կետերի տեսքով: Կետերը կարող են բաժանվել միայն համարակալված ենթակետերի. իսկ ենթակետերը՝ միայն համարակալված պարբերությունների: Կետերը և ենթակետերը համարակալվում են արաբական թվանշաններով, իսկ պարբերությունները՝ հայերենի այբուբենի փոքրատառերով:

իրավական ակտերի կետերի համարները տեքստից բաժանվում են միջակետով, ենթակետերը՝ փակագծերով, իսկ պարբերությունները՝ միջակետով:

Տեղական հարկերի տեսակների ու դրույքաչափերի սահմանման վերաբերյալ համայնքի ավագանու որոշումներ չեն կայացվել:

- 14) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին 21.12.2010թ. թիվ 3 /արձ. թիվ 14/, 09.12.2011թ. թիվ 20-Ն և 21.01.2013թ. թիվ 3-Ն որոշումներով սահմանել է «Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող երեխաների ծնողական վճարների դրույքաչափերը՝ 2011, 2012 և 2013 թվականների համար:
- 15) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթների՝ համայնքի ղեկավարը 2011 թվականի փետրվարի 8-ի թիվ 14 որոշմամբ առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն համարվող 120.9հա հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու մասին /համայնքի ավագանու որոշում՝ 21.03.2011թ. թիվ 6/:
- 16) Համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:
- 17) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին 21.12.2010թ. թիվ 5 /արձ. թիվ 14/, 09.12.2011թ. թիվ 22-Ա և 24.12.2012թ. թիվ 3 /արձ. թիվ 11/ որոշումներով հաստատել է գյուղապետարանի աշխատակազմի և «Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 2011, 2012 և 2013 թվականների համար:
Համայնքային ծառայության պաշտոնների մասով աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և (կամ) հաստիքացուցակը հաստատելու, ինչպես նաև փոփոխելու և (կամ) լրացնելու, համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին դիմելու մասին համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:
- 18) Համայնքի ավագանու կողմից չի հաստատվել բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությունը:
- 19) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթների՝ համայնքի ավագանին 21.12.2010թ. թիվ 6 /արձ. թիվ 14/, 09.12.2011թ. թիվ 23-Ա և 21.01.2013թ. թիվ 4-Ա որոշումներով հաստատել է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ 2011, 2012 և 2013 թվականների համար: Որոշումներին կցված չեն նշված իրավական ակտերով հաստատված հավելվածները:

1. Ֆինանսների բնագավառ

- 1) Լեռնակերտի համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն կազմել և սահմանված ժամկետներում համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացրել համայնքի 2011-2013 թվականների բյուջեների նախագծերը՝ (համայնքի ավագանու որոշումներ՝ 21.12.2010թ. թիվ 1 /արձ. թիվ 14/, 09.12.2011թ. թիվ 24-Ն և 24.12.2012թ. թիվ 4/արձ. թիվ 11/), դրանում առաջարկվող փոփոխությունները (համայնքի ավագանու որոշումներ՝ 06.10.2010թ. թիվ 21-Ն, 26.11.2010թ. թիվ 1/արձ. թիվ 12/, 09.12.2010թ. թիվ 1/արձ. թիվ 13/, 24.01.2011թ. թիվ 2/արձ. թիվ 1/, 21.03.2011թ. թիվ 1/արձ. թիվ 3/, 27.04.2011թ. թիվ 1/արձ. թիվ 4/, 25.07.2011թ. թիվ 2/արձ. թիվ 7/, 26.08.2011թ. թիվ 1/արձ. թիվ 8/, 06.10.2011թ. թիվ 1/արձ. թիվ 10/, 24.11.2011թ. թիվ 1/արձ. թիվ 11/, 19.12.2011թ. թիվ 1/արձ. թիվ 13/, 26.01.2012թ. թիվ 2/արձ. թիվ 1/, 08.05.2012թ. թիվ 1/արձ. թիվ 3/, 20.08.2012թ. թիվ 1/արձ. թիվ 5/, 26.09.2012թ. թիվ 1/արձ. թիվ 6/, 26.10.2012թ. թիվ 1/արձ. թիվ 7/, 27.11.2012թ. թիվ 3/արձ. թիվ 8/, 18.12.2012թ. թիվ 2/արձ. թիվ 10/, 21.01.2013թ. թիվ 2-Ն, 18.03.2013թ. թիվ 7-Ն, 13.04.2013թ. թիվ 10-Ն, 29.05.2013թ. թիվ 13-Ն և 02.08.2013թ. թիվ 1/արձ. թիվ 10/), տարեկան հաշվետվությունները՝ (ավագանու որոշումներ՝ 24.01.2011թ. թիվ 1 /արձ. թիվ 1/, 26.01.2012թ. թիվ 1 /արձ. թիվ 1/ և 21.01.2013թ. թիվ 1-Ն /արձ. թիվ 1/):

Համայնքի ղեկավարը խախտելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ համայնքի բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյակային հաղորդումներ չի ներկայացրել համայնքի ավագանուն:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 68-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածների՝ համայնքի 2010-2012թթ. բյուջեների կատարողականի տարեկան հաշվետվություններն ավագանին քննարկել և հաստատել է առանց աուդիտորական եզրակացության:

- 2) Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն տեղական հարկերի, տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է ավագանու հաստատմանը (ավագանու որոշումներ՝ 21.12.2010թ. թիվ 2/արձ. թիվ 14/, 09.12.2011թ. թիվ 19-Ն և 24.12.2012թ. թիվ 1/արձ. թիվ 11/):
- 3) Համայնքի ղեկավարը լրիվությամբ է իրականացրել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.1 կետի դրույթով սահմանված՝ տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական

սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքային սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձման և վերահսկման վերաբերյալ պարտադիր լիազորությունները:

Ստուգված ժամանակաշրջանում 2010թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 23,214.5 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 23,302.9 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 100.4 %-ով, կամ ավել է հավաքագրվել 88.4 հազար դրամ:

2011թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 22,994.4 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 22,860.3 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 99.4 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 134.1 հազար դրամ:

2012թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 23,090.7 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 23,009.6 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 99.6 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 81.1 հազար դրամ:

2013 թվականի 7 ամիսներին համայնքի բյուջեով նախատեսված 16,775.6 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 16,441.2 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 98.0 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 334.4 հազար դրամ:

- 4) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.2 մասի պահանջի, համայնքի ղեկավարի կողմից տեղական հարկեր, տուրքեր և վճարներ չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ չեն կիրառվել:
- 5) Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի պահանջման վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ղեկավարը չի ներկայացրել ավագանու հաստատմանը:
- 6) Համայնքի ղեկավարը ստուգված ժամանակաշրջանում լրիվությամբ է ապահովել համայնքի բյուջեի եկամուտների ամբողջական կատարումը: Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջի համաձայն տնօրինել է համայնքի բյուջեի միջոցները:

Համայնքի վարչական բյուջե հավաքագրված գումարները հիմնականում ծախսվել են աշխատավարձերի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների, էլեկտրաէներգիայի, կոմունալ վճարումների, շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման, համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելուն և այլ ծախսերի համար:

Ստուգված ժամանակահատվածում համայնքի ֆոնդային բյուջեներից կատարված ծախսերը հետևյալն են.

2010թ.- 1720.4 հազար դրամ, 2012թ. – 661.1 հազար դրամ և 2013թվականի օգոստոսի 1-ի դրությամբ - 2164.8 հազար դրամ:

2011թ. համայնքի ֆոնդային բյուջեից ծախսեր չեն կատարվել:

Գյուղապետարանում չեն պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջները: 2011-2012թթ. ընթացքում ընթացիկ տարվա համար գնումների պլան չի կազմվել և չի իրապարակվել: Գնումները կատարվել են առանց հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջները:

2013 թվականի համար կազմվել է գնումների պլանը պատվիրատու ղեկավարի կողմից և իրապարակվել է Gnumner.am կայքում, սակայն ըստ օրենսդրության պատվիրատու ղեկավարի կողմից չի սահմանվել գնումների համակարգող, պատասխանատու ստորաբաժանում և գնահատող հանձնաժողով:

2. Բաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

- 1) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի գլխավոր հատակագծի, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, գոտիավորման այլ փաստաթղթեր չեն կազմվել:
- 2) Համայնքի ղեկավարի կողմից քաղաքաշինական կադաստրի սահմանված կարգով վարման և համայնքի քաղաքաշինական կանոնադրության կազմման վերաբերյալ որոշումներ չեն ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը:
- 3) Համայնքում միջնակարգի քաղաքաշինական փոփոխություններ, կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման, ճարտարապետաշինարարական նախագծերի համաձայնեցման գործընթացներ չեն իրականացվել:
- 4) Համայնքի ղեկավարի կողմից շինարարության (քանդման) թույլտվություն չի տրամադրվել:
- 5) Համայնքի ղեկավարի կողմից ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտեր չեն ձևակերպվել:
- 6) Համայնքում ինքնակամ շինարարության իրականացման դեպքեր չեն հայտնաբերվել:
- 7) Համայնքի ղեկավարի կողմից շենքերի և շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:
- 8) Համայնքի ղեկավարի կողմից իրականացվել է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառում, կազմվել է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթեր և ներկայացվել է համայնքի ավագանու հաստատմանը:
- 9) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն չի տրամադրվել:

- 10) Համայնքի ղեկավարի կողմից համայնքային սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործման կազմակերպման և կառավարման վերաբերյալ գործառույթներ չեն իրականացվել:
- 11) Համայնքում չկան բազմաբնակարան բնակելի շենքեր: Այդ իսկ պատճառով համապատասխան գործառույթներ չեն իրականացվել:

3. Հողօգտագործման բնագավառ

- 1) Լեռնակերտի գյուղական համայնքը համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով կառավարության սահմանված կարգով կազմված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմա չունի:
- 2) Լեռնակերտի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են ընդամենը 1334.69հա, այդ թվում՝ վարելահող-71.94հա, արոտ-1216.34հա և այլ հողեր-46.41հա: Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են ընդամենը 852.62հա, այդ թվում՝ արոտ-829.42հա և այլ հողեր-23.2հա:

Գյուղապետարանում առկա է՝

համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար կնքված և իրավունքների պետական գրանցման ենթարկված 21 վարձակալության պայմանագրեր 25.59հա վարելահողերի համար՝ 122.6հազ.դրամ վարձավճարով և 2 վարձակալության պայմանագրեր 0.04հա արոտի համար՝ 220.0հազ.դրամ վարձավճարով,

պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար կնքված և պետական գրանցման ենթարկված 3 պայմանագրեր 343հա արոտների համար՝ 468.7հազ դրամ տարեկան վարձավճարով:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 46.35հա վարելահողերը, 1216.34հա արոտները և պետական սեփականություն հանդիսացող 486.42հա արոտները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործման տրամադրված չեն:

Լեռնակերտ համայնքում փաստացի ստուգման արդյունքում պարզվեց, որ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 43.35հա վարելահողերը հնարավոր չէ օգտագործել որպես վարելահող: Համայնքի ղեկավարին տրվել է ցուցում դիմել ՀՀ Շիրակի մարզպետին օրենքով սահմանված կարգով կատարել հողատեսքի փոփոխություն:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝

01.09.2010–31.12.2010թ. ժամանակահատվածում բյուջեով նախատեսված 171.0հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 218.2

հազ. դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, այսինքն՝ բյուջեով նախատեսվածից ավել է մուտքագրվել 47.2հազ.դրամ:

2011թ. բյուջեով նախատեսված 848.0հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 878.2հազ. դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, այսինքն՝ բյուջեով նախատեսվածից ավել է մուտքագրվել 30.2հազ.դրամ:

2012թ. բյուջեով նախատեսված 867.0հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 870.3հազ. դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, այսինքն՝ բյուջեով նախատեսվածից ավել է մուտքագրվել 3.3հազ.դրամ:

01.08.2013թ. դրությամբ բյուջեով նախատեսված 573.4հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 608.0հազ դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին:

01.01.2013 թվականի դրությամբ վարձավճարի ապառքներ չկան:

01.09.2010թ.-01.08.2013թ. ժամանակահատվածում համայնքային և պետական սեփականություն համարվող հողամասերի աճուրդային եղանակով օտարում չի իրականացվել:

- 3) Լեռնակերտի համայնքի գյուղացիական տնտեսություններում հաշվառված 892 գլուխ խոշոր եղջերավոր անասունների առկայության պայմաններում համայնքային սեփականություն հանդիսացող 1216.21հա արոտները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործման տրամադրված չէ: Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկվել ապօրինի հողօգտագործումը կանխելու և արոտի օգտագործումը օրենքով սահմանված կարգով կազմակերպելու ուղղությամբ, որի վերաբերյալ համայնքի ղեկավարին տրվել է ցուցում օրենքով սահմանված կարգով կազմակերպել օգտագործման տրամադրման մրցույթներ:
- 4) 01.09.2010թ.-01.08.2013թ. ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից ապօրինի հողօգտագործման դեպքեր չեն արձանագրվել:
- 5) Օրենքով սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռի կազմման գործընթացներ:
- 6) Համայնքի վարչական տարածքում գտնվող թվով 4 գեոդեզիական կետերի և սահմանանիշերի պահպանության նկատմամբ իրականացվել է վերահսկողություն:

4. Տրանսպորտի բնագավառ

- 1) Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման գործառույթներ չեն իրականացվել:

- 2) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների և կազմակերպությունների գործունեության կազմակերպման և կառավարման գործառույթներ չեն իրականացվել:
- 3) Իրավասու մարմինների ներկայացմամբ համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության կշանների տեղակայման ու հանման հաստատման և թույլատրման գործառույթներ չեն իրականացվել:
- 4) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմա չի կազմվել և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացվել (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

7. Այլ բնագավառներ

- 1) Վերոնշյալ ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից հրավիրվել և անցկացվել են համայնքի ավագանու 42 նիստեր:

Առանձին որոշումների պաշտոնական տեքստի վերջին էջի տեքստից հետո չի նշված պաշտոնատար անձի կողմից իրավական ակտի ստորագրման տարին, ամիսը, ամսաթիվը և ընդունման վայրը /հիմք <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մաս/:

Առանձին որոշումների համարները կրկնվել են: Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի յուրաքանչյուր որոշում պետք է ունենա իր հերթական համարը:

Համայնքի ավագանու 2012 թվականի մարտի 26-ի թիվ 2 /արձ. թիվ 2/ որոշմամբ ձեռք բերված համակարգիչը և էլեկտրական ջեռուցիչներն ընդգրկվել են համայնքի հաշվեկշռում: Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի՝ համայնքի ավագանու կողմից համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերում լրացում կատարելու մասին որոշում չի կայացվել:
- 2) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1¹ կետի դրույթների՝ համայնքի ղեկավարն անհատական ակտեր ընդունելուց հետո դրանք սահմանված ժամկետում չի ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցրել համայնքի ավագանու նստավայրում:
- 3) Համայնքի ղեկավարի կողմից օրենքով սահմանված ժամկետում կազմվել և համայնքի նորընտիր ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի 2013-2016թթ. զարգացման ծրագիրը:

4) Համայնքի ղեկավարը խախտել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթները և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացրել գյուղապետարանի աշխատակազմի, ինչպես նաև «Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների նախագծերը:

Լեռնակերտի համայնքն առանձնացված ստորաբաժանումներ, ինչպես նաև բյուջետային հիմնարկներ չունի:

5) Համայնքի ղեկավարի կողմից աշխատակազմի կառուցվածքի վերաբերյալ որոշման նախագիծ և դրանում առաջարկվող փոփոխությունն ավագանու հաստատմանը չի ներկայացվել, դրա անհրաժեշտությունը չլինելու պատճառով:

6) Համայնքի ղեկավարը աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշումների նախագծերը 2011, 2012 և 2013 թվականների համար ներկայացրել է համայնքի ավագանու հաստատմանը:

Համայնքի ղեկավարի կողմից աշխատակազմի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերի փոփոխությունների վերաբերյալ որոշումների նախագծերը ներկայացվել է համայնքի ավագանու հաստատմանը:

7) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների՝ համայնքի ղեկավարը Լեռնակերտի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկը «Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման նախագիծը ներկայացրել է համայնքի ավագանու հաստատմանը /համ.ավագանու որոշում՝ 21.03.2011թ. թիվ 3 /արձ. թիվ 3//:

8) Համայնքի ղեկավարի կողմից համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների խորհրդների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացվել:

9) Համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 12 կարգադրությամբ Աշոտ Բաղդասարյանն ազատվել է համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնից:

Համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 14 կարգադրությամբ Աշոտ Բաղդասարյանը նշանակվել է համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:

Վերոնշյալ ժամանակահատվածում գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի նշանակման և ազատման կարգադրություններ չեն եղել:

10) Համայնքի ղեկավարի 2011 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 13 կարգադրությամբ Լուսիկ Ղազարյանը ազատվել է Լեռնակերտի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկի տնօրենի պաշտոնից և 2012 թվականի հունվարի 9-ի թիվ 2 կարգադրությամբ նշանակվել է «Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում:

- 11) Համայնքի ղեկավարի կողմից տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշման նախագիծ համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացվել:
- 12) Վերոնշյալ ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրեր չեն կնքվել: Միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագիծեր ավագանու հաստատմանը չի ներկայացվել:
- 13) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի ավագանուն առաջարկություն է ներկայացվել համայնքի սեփականություն համարվող 120.9հա հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու մասին /ավագ.որոշում՝ 21.03.2011թ. թիվ 6 /արձ. թիվ 3//:
- 14) Համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկ չի ներկայացվել:
- 15) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի, փողոցների, պողոտաների, հրապարակների, գրոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների անվանման և վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկ չի ներկայացվել:
- 16) Վերոնշյալ ժամանակահատվածում համայնքի ղեկավարը շինությունների համարակալման (հասցեավորման) վերաբերյալ կայացրել է թվով 142 որոշումներ:
- 17) Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 188 որոշում և արձակվել 40 կարգադրություն:
Համաձայն «Դրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դրույթների՝ համայնքի ղեկավարի որոշումներում և կարգադրություններում կատարված հղումները թերի են:
- 18) Օրենքով, կառավարության սահմանած կարգով ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ որպես պետության պատվիրակած լիազորություն, համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել և ղեկավարվել է համայնքում անասնաբուժական ծառայությունը: Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:
- 20) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների վարման աշխատանքներ չեն իրականացվել:
- 21) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել օրենքով կամ կառավարության սահմանած կարգով քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:
Համայնքի ղեկավարի 2011 թվականի մայիսի 12-ի թիվ 81 որոշմամբ Լեռնակերտի համայնքում անցկացվել են ուսումնավարժական միջոցառումներ:

Համայնքի ղեկավարի 2011 թվականի մայիսի 12-ի թիվ 82 որոշմամբ համայնքում ստեղծվել է քաղաքացիական պաշտպանության շտաբ, տարհանման հանձնաժողով և քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

- 22) Գյուղապետարանում սահմանված կարգով վարվում է համայնքի բնակիչների հաշվառման գիրք (ծխամատյան) և կազմակերպվում է համայնքի բնակիչների հաշվառումը:
- 23) Վերոնշյալ ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում ներկայացնելու դեպքեր չեն արձանագրվել:
- 24) Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարվում են քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության են առնվում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:
- 25) Համայնքի ղեկավարը սահմանված կարգով ներկայացրել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով և համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 25-ի թիվ 1 /արձ. թիվ 7/ որոշմամբ հաստատվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը:

Որոշման հրումը պետք է կատարվեր Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 14-ի «խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 164-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 3-րդ կետին, համաձայն որի՝ խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը /5-ից 9-ը/ հաստատելու մասին որոշումը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշմամբ հանձնաժողովի անհատական կազմից սահմանվում են նաև հանձնաժողովի նախագահ և հանձնաժողովի քարտուղար:

- 26) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի ղեկավարի կողմից տրվել են երեխայի ծննդի պետական գրանցման վերաբերյալ գրավոր հայտարարություններ:
- 27) Գյուղապետարանում օրենքով սահմանված կարգով վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակչության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և

աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացվել են տարածքային գինվորական կոմիսարիատ:


ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. Համայնքի ղեկավարը խախտել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթները և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացրել գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին որոշման նախագիծը:
2. ՀՀ կառավարության սահմանված կարգով գյուղապետարանում վարվում են համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու իրավական ակտերի հաշվառման մատյաններ: Գյուղապետարանում վարվող գրանցամատյանները սահմանված կարգով համարակալված, թելակարված և հաստատված են համայնքի ղեկավարի կողմից:
3. Ուսումնասիրության ենթարկված բոլոր իրավական ակտերը գրառված են իրավական ակտերի հաշվառման մատյաններում:
4. Լեռնակերտի համայնքն առանձնացված ստորաբաժանումներ չունի:
5. Լեռնակերտի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները թվով 3-ն են՝ աշխատակազմի քարտուղար, աշխատակազմի առաջատար մասնագետ և աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ: Գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների մասով հաստիքացուցակը համապատասխանում է համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկին, ինչպես նաև պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի և «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:
6. Համայնքի ղեկավարի 2011 թվականի մայիսի 12-ի թիվ 80/1 որոշմամբ հաստատվել է գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագիրը և համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի դրույթների՝ նույն հարցի վերաբերյալ նախկին իրավական ակտն ուժը կորցրած է ճանաչվել:
Համայնքի ղեկավարի 2012 թվականի հունիսի 1-ի թիվ 28 որոշմամբ հաստատվել է գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը:
Վերոնշյալ ժամանակահատվածում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկից պաշտոններ չեն հանվել և նոր պաշտոններ չեն ավելացվել:
7. Համայնքային ծառայողների անձնական գործերի վարումը իրականացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կարգի համաձայն:
8. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կարգի համաձայն համայնքի ղեկավարի 2011 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 114 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերը:


Համայնքի ավագանու կողմից հանձնաժողովի կազմում ընդգրկվող համայնքի ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը հաստատվել են 2013 թվականի փետրվարի 11-ի թիվ 5-Ա որոշմամբ և 20-օրյա ժամկետում հրավիրվել է հանձնաժողովի աշխատակարգային նիստ ու ընտրվել է հանձնաժողովի նախագահի տեղակալ:


9. Համայնքի ղեկավարի 2010 թվականի հունիսի 2-ի թիվ 21 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը:
10. Համայնքի ղեկավարի 2010 թվականի հունիսի 2-ի թիվ 20 որոշմամբ հաստատվել է գյուղապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը:
11. Գյուղապետարանի աշխատակազմում վարվում են համայնքային ծառայության թափուր տեղերի համար անցկացվող մրցույթներին դիմած քաղաքացիների տվյալների գրառման, համայնքային ծառայողների վերապատրաստման հաշվառման, ինչպես նաև համայնքային ծառայողների անձնական գործերի հաշվառման մատյաններ:
12. Համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնողների կրթությունը, համապատասխան ստաժը և այլ տվյալներ համապատասխանում են համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին:
13. Համայնքի ղեկավարի կողմից «Շիրակի մարզպետարան ներկայացված գրանցամատյանային (Ձև NN 1, 2) տվյալները արժանահավատ են:
14. Վերոնշյալ ժամանակահատվածում համայնքային ծառայության թափուր պաշտոններ չեն առաջացել:
15. Գյուղապետարանում սահմանված կարգով վարվում է զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյան:
16. Վերոնշյալ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից համայնքում ուսումնասիրություններ չեն կատարվել և թերություններ չեն հայտնաբերվել:


 L. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ


 Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

 Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

 Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

 Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

 ՕՖ. ՄԻԿԹԱՐՅԱՆ

 Մ. ՄՈՎՍԻՍՅԱՆ